ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է *Արցախի*[*11)] Հանրապետությունում տեղական տուրքերի և վճարների հասկացությունը, տեղական տուրք և վճար վճարողներին, տեղական տուրքերի և վճարների սահմանման, դրանց գանձման կարգն ու պայմանները, կարգավորում է տեղական տուրքերի և վճարների հետ կապված այլ հարաբերություններ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների և (կամ) նրանց հիմնադրած ձեռնարկությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերին համապատասխան գանձվող վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են *Արցախի*[*11)] Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

Հոդված 2. Տեղական տուրքի հասկացությունը

Տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Սույն օրենքով սահմանված առանձին դեպքերում տեղական տուրքը կարող է գանձվել պարբերաբար:

Հոդված 3. Տեղական վճարի հասկացությունը

Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Գ Լ Ո Ւ Խ 2

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Տեղական տուրք եւ (կամ) վճար վճարողները

Տեղական տուրք և (կամ) վճար վճարող են համարվում սույն օրենքի 7 հոդվածում նշված լիազորությունների իրականացման դիմաց և 8 հոդվածում նշված գործողությունների համար վճարող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Հոդված 5. Տեղական տուրք եւ (կամ) վճար վճարողների իրավունքները

Տեղական տուրք և (կամ) վճար վճարողներն իրավունք ունեն՝

ա) պահանջել տեղական տուրք և (կամ) վճար գանձող մարմնից՝ կատարել տուրքի և (կամ) վճարի հաշվարկ, ինչպես նաև վերահաշվարկ.

բ) գանգատարկել տեղական տուրք և (կամ) վճար գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները.

գ) ստանալ տեղական տուրքը և (կամ) վճարը վճարելու մասին տեղեկանք.

դ) օրենքով սահմանված դեպքերում հետ պահանջել և ստանալ վերադարձման ենթակա տեղական տուրքի և (կամ) վճարի գումարը.

ե) դիմել համայնքի ղեկավարին՝ սույն օրենքով սահմանված կարգով տեղական տուրքի և (կամ) վճարի արտոնություններ ստանալու համար:[*10)]

Հոդված 6. Տեղական տուրք եւ (կամ) վճար վճարողների պարտականությունը

Տեղական տուրք և (կամ) վճար վճարողները պարտավոր են տեղական տուրքի և (կամ) վճարի գանձմամբ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

Գ Լ Ո Ւ Խ 3

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 7. Տեղական տուրքերի տեսակները

Արցախի[*11)] Հանրապետության համայնքներում կարող են սահմանվել տեղական տուրքերի հետեւյալ տեսակները.

ա) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Արցախի[*11)] *Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.*

բ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար.

գ) համայնքի տարածքում ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.

դ) համայնքի տարածքում բացօթյա առեւտուր կազմակերպելու թույլտվության համար.

դ[1]*) համայնքի տարածքում շրջիկ առևտուր իրականացնելու թույլտվության համար.*[*3)]

ե) համայնքի տարածքում՝ առեւտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) եւ խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.[*2)]

զ) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ Ստեփանակերտ քաղաքի եւ քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.

է) համայնքային կանոններին համապատասխան՝ համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.

ը) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար.

թ) համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

ժ) «Թանկարժեք մետաղների մասին» [*11)] *օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար:*[*1)]

ժա) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.[*2),*3),*5)]

ժբ) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.[*5)]

ժգ) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար.[*8)]

ժդ) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար.[*9)]

ժե) համայնքի տարածքում մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների, բանկոմատների, տերմինալների տեղադրման թույլտվության համար:[*11)]

Հոդված 8. Տեղական վճարների տեսակները

Արցախի[*11)] Հանրապետության համայնքներում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները.

ա) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար վճար.[*2),*7)]

ա[1]*) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար վճար.*[*7)]

բ) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողե-

ը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար:

դ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.

ե) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար:[*6)]

Գ Լ Ո Ւ Խ 4

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 9. Տեղական տուրքերի դրույքաչափերի սահմանումը

1. Տեղական տուրքերի դրույքաչափերը, սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

2. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր:

3. Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Հոդված 10. Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ մինչև 5000 դրամ.

բ. 20 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 300 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հասարակական, արտադրական և այլ նպատակային նշանակության օբյեկտների համար՝ մինչև 10 000 դրամ.

գ. 300 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 500 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 500 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հասարակական, արտադրական և այլ նպատակային նշանակության օբյեկտների համար՝ մինչև 20 000 դրամ.

դ. 500 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 1000 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50 000 դրամ.

ե. 1000 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 2000 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 70 000 դրամ.

զ. 2000 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100 000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 2000 դրամ.

բ. 20 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 4000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի

ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է մինչև 2000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 3000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 25 000-150 000 դրամ:

5. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օբյեկտի համար՝

1) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 200 բնակիչ ունեցող համայնքի համար՝0-3000 դրամ.

բ. 200-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝

- մինչև 18 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինությունների ներսում՝0-4000 դրամ.

- 18 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 80 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող շինությունների ներսում՝4000-8000 դրամ.

- 80 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող շինությունների ներսում՝8000-12 500 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 200 բնակիչ ունեցող համայնքի համար՝0-4000 դրամ.

բ. 200-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝2000-6000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝

*1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար (բացառությամբ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման) տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝[*12)] 100-350 դրամ.*

2) շրջիկ առևտուր իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝250-1000 դրամ.

3) մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների, բանկոմատների, տերմինալների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝100-350 դրամ.

4) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-200 000 դրամ՝ յուրաքանչյուր օբյեկտի համար.

5) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20 000- 60 000 դրամ.

6) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պատերազմական գործողություններից տուժած, նոր բնակեցվող, ծայրամասային և լքված բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ.

7) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պատերազմական գործողություններից տուժած, նոր բնակեցվող, ծայրամասային և լքված

բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-5000 դրամ:

7. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 20 000-50 000 դրամ:

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 0-10 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 2500-12 500 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 7500-25 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 12 500-250 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 62 500-75 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 12 500-25 000 դրամ:

9. Համաքաղաքային կանոններին համապատասխան Ստեփանակերտ քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-4000 դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային՝ սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս, արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ.

2) թունդ ալկոհոլային՝ սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս, արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500-2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1000 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 0-500 դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-1000 դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ՝ յուրաքանչյուր մեքենայի համար:

13. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ ընթացիկ տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 10 000-20 000 ՀՀ դրամ.

2) հեստապարային ակումբի համար՝ ընթացիկ տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 100 000-300 000 ՀՀ դրամ:

14. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, Ստեփանակերտ քաղաքում՝ 2.0 անգամ ավելի:

15. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքներում հաշվարկվում են 0.4, Ստեփանակերտ քաղաքում՝ 1.5, իսկ քաղաքային այլ համայնքներում՝ 1.0 գործակիցների կիրառմամբ: [*1), *2), *3), *4), *5), *8), *9), *11)]

Հոդված 11. Տեղական վճարների դրույքաչափերի սահմանումը

1. Տեղական վճարի դրույքաչափը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով:

2. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

3. Ընթացիկ տարվա համար տեղական վճարների դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Գ Լ Ո Ւ Խ 5

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 12. Տեղական տուրքի եւ (կամ) վճարի հաշվարկումը և գանձումը

Տեղական տուրք և (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիա-

գործությունների կամ գործողությունների իրականացումը՝ ելնելով սույն օրենքին համապատասխան սահմանված տեղական տուրքի կամ վճարի դրույքաչափերից:

Հոդված 13. Արտոնությունները

1. Արտոնություններ կարող են կիրառվել համայնքի ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտանությունները՝ համայնքի ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

2. Համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձինք տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով՝ սույն օրենքով սահմանված արտոնություններ սահմանելու նպատակով կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ներկայացնելով արտոնություններ ստանալու նպատակով համայնքի ավագանու սահմանած փաստաթղթերը և տեղեկությունները:

3. Տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը համայնքի ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը:

4. Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:[*10)]

Հոդված 14. Տեղական տուրքի եւ (կամ) տեղական վճարի ավել մուծված գումարները վերադարձնելը

1. Տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի ավել մուծված գումարները ենթակա են վերադարձման՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը տալուն հաջորդող 30 օրվա ընթացքում:

2. Տեղական տուրքը և (կամ) վճարը ենթակա են վերադարձման՝ մասնակի կամ լրիվ, եթե՝

ա) տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել են ավելի, քան սահմանել է համայնքի ավագանին.

բ) տեղական տուրք կամ վճար գանձող մարմինները մերժել են համապատասխան գործողությունների կատարումը կամ վճարողներին վերադարձրել են նրանց դիմումները:

Գ Լ Ո Ւ Խ 6

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 15. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ *Արցախի*[*11)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 16. Տեղական տուրքը կամ վճարը հաշվարկելու եւ գանձելու պատասխանատվությունը

Տեղական տուրքը կամ վճարը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է տեղական տուրք կամ վճար գանձող համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձանց վրա:

Հոդված 17. Տեղական տուրքերը եւ վճարները հաշվարկելու եւ գանձելու կարգը պահպանելու նկատմամբ հսկողությունը

Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Հոդված 18. Տեղական տուրքերը կամ վճարները գանձելիս համապատասխան պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը

1. Տեղական տուրքերը կամ վճարները գանձելիս համապատասխան պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք, կամ դատարան:

2. Վերադասության կարգով գանգատները քննության են առնվում եւ դրանց առթիվ որոշումներ են ընդունվում գանգատը ստացվելու օրվանից ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:

Գ Լ ՈՒ Խ 7

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 19. Տեղական տուրքերը եւ վճարները վճարելու արժույթը

Տեղական տուրքերը և վճարները վճարվում են *Արցախի*[*11)] Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

Հոդված 20. Տեղական տուրքը կամ վճարը սահմանելու վերաբերյալ որոշումների գանգատարկումը

Տեղական տուրքը կամ վճարը սահմանելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումները կարող են գանգատարկվել դատարան:

Հոդված 20[1]. Համայնքի անդամներին տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ իրազեկումը

1. Համայնքի ղեկավարն ապահովում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի և վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումը:

2. Իրազեկման այլ միջոցների թվում համայնքի ղեկավարն ապահովում է իր գտնվելու վարչական շենքում, մուտքից ներս գտնվող առավել տեսանելի վայրում գտնվող ցուցատախտակների վրա իր կողմից հաստատված՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված տեղեկությունները պարունակող տեղեկանքների հրապարակումը:

3. Համայնքի ղեկավարը տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, դրանց վճարման կարգի և ժամկետների վերաբերյալ տեղեկանքը հրապարակում է ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Համայնքի ղեկավարն ամսվա ընթացքում ստացված տեղական տուրքերի և վճարների գումարների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ տեղեկանքը հրապարակում է ոչ ուշ, քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ: [*2)]

Հոդված 21. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ նրա դրույթները կիրարկվում են 1999 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 22. Անցումային դրույթներ

1. 2022 թվականի համար չեն գործում սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սահմանափակումները: Թույլատրվում է մեկական անգամ կատարել տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերի փոփոխություն՝ միայն նվազեցման ձևով:[*11)]

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

13 հունվարի 1999թ.
ք.Ստեփանակերտ
ՀՕ-38

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*11)]

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 5-րդ հոդվածը, որը վերաբերում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «գ», «ե», «զ» պարբերություններին, 6-րդ կետի 3-րդ ենթակետին և 1000 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «գ», «ե», «զ» պարբերությունների և 6-րդ կետի 3-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, իսկ 1000 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 2023 թվականի հունվարի 1-ը տեղական տուրքը կհաշվարկվի մինչև 70 000 դրամով:

**1) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (20.06.07թ. ՀՕ-53) խմբագրությամբ (ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո):*

**2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (13.02.08թ. ՀՕ-3) խմբագրությամբ:*

**3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10թ. ՀՕ-59-Ն) խմբագրությամբ:*

**4) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (21.02.13թ. ՀՕ-4-Ն) խմբագրությամբ:*

**5) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (31.10.13թ. ՀՕ-42-Ն) խմբագրությամբ:*

**6) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (31.10.18թ. ՀՕ-55-Ն) խմբագրությամբ:*

**7) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (27.06.19թ. ՀՕ-87-Ն) խմբագրությամբ:*

**8) «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (19.12.19թ. ՀՕ-127-Ն) խմբագրությամբ:*

**9) «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (30.04.20թ. ՀՕ-27-Ն) խմբագրությամբ (ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո):*

**10) «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (16.12.21թ. ՀՕ-143-Ն) խմբագրությամբ:*

**11) «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (02.02.22թ. ՀՕ-3-Ն) խմբագրությամբ:*

**12) «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (29.09.22թ. ՀՕ-59-Ն) խմբագրությամբ:*